

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 9—12

ՍԵՊՏԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ

Հ. ՏԱՐԻ 1956

ԵՒՍԵՐԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՄԵՍԱՑԻՈՅ ԺԱՌՔ

(Շարունակութիւն:)

Բ.

ՎԱՍՆ ԶԱՐԶԱՐԱՆԱՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԶԱՐԶԱՐԵԼՈՅ ԶԱՒՐՈՒԹԵԱՆՆ

1. Զծարաւիս կոչէ Յիսուս զալ առ ինքն եւ ըմպել զջուրն կենդանի. եւ ուտել զհացն երկնաւոր: Զուր կենդանի է ըմպելի եւ ոչ ծախական. հաց երկնաւոր է ուտելի եւ ոչ նուազական: Ոչ բաժանեալ եւ արբուցանէ, ոչ պատառեալ եւ կերակրէ: Զխախտեալ յիւրմէ բնութենէն եւ լինի երախտաւոր: Ոչ միայն արբուցանէ, այլ եւ «գեւսս յորովայնէ բղխէ»:

2. Զուրս երեւելի արտաքուստ ի ներքս ի մեզ մտանէ. յորժամ առաջինն մտեալ հալիցի, դարձեալ ծարաւեմք. ոչ լինի մեզ ջուրն աղբիւր, այլ պէտք արտաքսրնկեցիկք: Իսկ ջուրն որ ի նմանէն՝ ոչ միայն յոգիսն զետեղի, այլ եւ յորդեալ բղխէ զաստուածպաշտութիւնն եւ զարդարութիւն եւ զցածութիւն:

3. Հոգին մի է, այլ բազում զաւրութիւնս բաշխեալ պարգեւէ: Զի եթէ որպէս հացն ի բազումս բաշխի, եւ մասն մի ի մին երթայ եւ միւսն եւս բաժին յայլ, նոյնպէս եւ Հոգին սուրբ: Քանզի չէ ինչ հնար անմարմնականաց բաժանել, զի մասունք եւ բաժինք եւ հերձուածք մարմնոց են կարիք:

4. Զատեալ մեկնեալ է բնութիւն անմարմնականաց ի մարմնականաց: Եւ ոչ մի ինչ հազորութիւն ազգականութեան է մարմնոց առ անմարմնականս. զի մարմին յաւդուածականութեան եւ անմարմինն պարզական: Մարմին ի տեղուջ. եւ անմարմինն յանտեղուջ. մարմին ի թանձրութեան եւ անմարմինն յառաջքան զթանձրութիւնսն: Մարմին աճէ եւ զարգանայ. եւ անմարմինն կայ մնայ որպէս եւ էրն: Մարմին զիջանէ եւ նուազէ. անմարմինն ոչ աճէ եւ ոչ նուազէ: Մարմին պատառէ եւ քակտի. անմարմինն ոչ պատառէ եւ ոչ քակտի: Մարմին փոփոխի եւ այլայլի. անմարմինն կայ մնայ մարդջ ի բնութեանն: Մարմինն զարմանեալ յաւրանայ, անմարմինն չէ ինչ կարաւո կերակրոց:

15 Բ բաժինս:

16 Բ կիրք կարիք:

26 Բ մնա:

Բնագիր. Բ. 13բ—42ա:

1 Հմմտ. Յովհ. է. 37:

2 Յովհ. 2. 52:

4 Բ բաժանել: Հըխախտեալ:

Մարմին դարձանեալ ի գոյն եւ յոյժ յաւելու, քանզի ոչ լինի ինքն
 իւր բաւական առանց կերոց աւգնականութեան. իսկ անմարմինն
 30 եւ զմարմին կերակրէ :

5. Մարմինք արտաքուստ ունին ջուր, եւ ոչ ի ներքուստ արտաքս բղխեն. իսկ որ ի Տեառնէ ջուրն է՝ «գետս յորովայնէ բղխէ»։ Եւ զի հոգի մի է, զիա՞րդ գետք յիւրաքանչիւր որովայնից խաղայցեն։ Այլ քանզի մեծատուն է հոգին, կարող է յամենայն որովայնից աստուածապաշտաց գնացուցանել գետս յիստակ, ահանակիտ։ Սուրբ է բղխումն գետոյն աստուածապաշտութեան։

60. Զիք ինչ լուսաւորագոյն քան զաստուածպաշտութիւն. բարեութեւ գեղեցիկ եւն ցածութիւն եւ արդարութիւն, այլ ոչ այնչափ, որչափ եւ աստուածպաշտութիւնն: Արդարութիւն մարդկանէ առ մարդիկ. եւ ցածութիւն ի կարեաց ի մարդկանէ առ մարդիկ. իսկ աստուածպաշտութիւն խնամ եւ գութ ի մարդկանէ առ Աստուած: Որչափ Աստուածն առաւել է քան զմարդիկ, նոյնպէս եւ աստուածպաշտութիւնն քան զամենայն առաքինութիւնս: Յորժամ աստուածպաշտութիւնն յառաջագոյն համարիցի, եւ ցածութիւնն ցածունութիւն է, եւ արդարութիւնն արդարութիւն, եւ այլ եւս առաքինութիւնքն՝ առաքինութիւնք:

7. Ի ճանաչել զՏէր առաքինութեանցն, մի ոք ի հերձուածո-
ղացն կոչեսցի ցածուն եւ հեղ: Որ բամբասէ զարարածս արարչին
եւ ամպարչոյ, ոչ վասն ցածութեան զգաստանայ, այլ ի հակա-
ռակ մտեալ ընդ արարչին կռուի: Մի կոչեսցին պահքն հերձուա-
ծողաց պահք, քանզի ոչ վասն աստուածպաշտութեան սանձեն
զմարմին պահովք, այլ մարտ եղեալ ընդ արարածս ոչ ճաշակեն:
Չէ համարեալ նոցա կուսութիւնն կուսութիւն, այլ ի պոռնկու-
թիւն. քանզի պիղծ համարին զարարչութիւնն ամուսնութեանն:
Չի վասն կարծական սրբութեանն ընդ արարչին ոգորին. սրբու-
թիւնն նոցա պղծութիւն է. եւ պահք նոցա բամբասանք եւ ընթեր-
ցուածքն անէծք, զի զկերակրիչն եւ զաւրինատուրն բամբասեն:

8. Ուստի սուրբ եկեղեցի, զի թէպէտ եւ գտանիցին ի նոսա սուրբք եւ ցածունք եւ պահողք, թէ մարթիցի ասել սուրբս զանկեալն յաստուածպաշտութենէ եւ զչինեալսն ի վերայ վիմին հաստատութեան, ոչ ընդունի. քանզի պարտ է նախ դաւանել զճմարիտ դաւանութիւնն, եւ ապա մատչել ի ճգնութիւնս առաքինութեանց: Վասն այնորիկ ոչ ընդունի զՀրեայս եւ զհերձուածողս եկեղեցի. եւ եթէ ոչ ապաշխարեալ թողուցուն զամպարչտութիւնն: Նախ պարտ է լինել ծառայ մտերիմ, ապա եւ ընծայ ինչ ունել առաջի տեառնն: Ապա թէ ապստամբ ի տեառնէն իցէ,

36 Հմմտ. ՅմԿ. է. 38:

48 ρωδῶνται :

49 Բ արամտանայ :

50 R *lynnel* ⁸u:

56 Բ քանքանաք :

57 Բ քանքանսէն :

58 Բ *դռանիցի* :

65 f. *diminui* :

389

տուեալ զձեռս յայլ թագաւոր, հանդերձ կարծեալ հաճոյիւք աւ-
տարութի տարազրէ. քանզի ոչ դաւանէ զտէրն:

9. Եւ եթէ այս այսպէս իցէ, ապա ամենայն ճգունք նախ ի
 70 վերայ աստուածապաշտութեան լինիցին. զի եւ այլ եւս բարի գործքն
 նուաւ լինիցին ընդունելիք: Զի յորժամ լոյս ծագիցէ, եւ ինքն
 երեւի եւ նուաւ ամենայն ինչ. ապա եթէ ոք ի լուսոյն վրիպեալ
 գտանիցի, եւ ոչ զայլ եւս ինչ նշմարել կարիցէ: Այսպէս յոր-
 ժամ զաստուածգիտութիւնն յառաջագոյն ունիցիմք ճանաչել
 75 զՀայր, խոստովանել զմորդի, դաւանել զսուրբ Հոգին: Ապա թէ
 պահեմք, պահքն ընդունելի են. եւ եթէ զգաստանամք՝ զգաստու-
 թիւնն. եւ եթէ զաւրէնան ընթեռնուցումք, յարժանի ընթեռնու-
 ցումք եւ ընդ առաւելութիւն նոր կտակարանաց յիրաւի զարմա-
 նամք: Ապա եթէ անկանիցի ոք յուղղորդ ճանապարհէն՝ յոր
 80 կողմն եւ գնայցէ մոլորեալ գտանի:

10. Մի՛ խռովեսցէ զմեզ անուանցն նմանութիւն: Կոչի տէրն
Ջուր, այլ մատակաց նմին կայ կենդանին, զի մի՛ նմանական ա-
նուամբն պատրել, խաղացս ինչ եւ ածել եւ նուագել ջուրց կայցես
այնմ, յոր ոչ հպին փոփոխմունք: Կոչի եւ Հաց, զի թէպէտ եւ
անունն զքեզ ի խոնարհ իջուցանիցէ, այլ հաց է վերադիրն յեր-
կինս, քանզի հաց ասի երկնաւոր: Կոչի եւ Ճանապարհ, ոչ եթէ
կոխիցի, այլ առաջնորդէ առ Հայր: Կոչի եւ Դուռն, ոչ եթէ ի
փայտից իցէ հաստատեալ, այլ զի ընդ նա է մուտ առ Հայր. «Ոչ
ոք, ասէ, կարէ մտանել առ Հայր, եթէ ոչ ինեւ»: Մի՛ միայն ցա-
մաք զանուանն լսել, այլ եւ առնուլ ի միտ յանուանցն եւ զգալ-
բութիւնն. զի եթէ ըստ անուանցն եւեթ ոք չըջիցի, ինքն անձին
ի տերունական ճանապարհսն դնէ գայթաղուցութիւն:

11. Բարևոք ասէ աւետարանիչն Յովհանն, եթէ «Բանն մար-
մին եղեւ եւ բնակեաց ի մեզ. եթէ ցամաք լսիցիս զայն, եթէ
95 «Բանն մարմինն եղեւ», կարծի թէ անմարմինն ի մարմին փոխեցաւ:
Եւ եթէ չունչ որ ի մարմնի է, ի մարմին ոչ փոխիցի, զիարդ ար-
դեւք բանն ի մարմին փոխէր: «Եւ բնակեաց, ասէ, ի մեզ», եւ ոչ
ի նմա. ըստ այնմ է իմանալ, եթէ «Ահաւագիկ կոյս յղացի եւ
ծնցի որդի եւ կոչեացեն զանուն նորա Եմանուէլ, որ թարգմանեալ
100 «Ընդ մեզ» աստուած»: Եւ ոչ ասէ, թէ ընդ նմա աստուած, այլ
«Ընդ մեզ». ըստ այնմ զոր մարգարէն ասէ, եթէ «Սա է աստուած
մեր, ընդ որում ոչ համարեսցի այլ:» «Յետ այսորիկ յերկրի
երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ»: Եւ եթէ Աստուած առեալ

85 Բ անուանին :

93 Բ ԴՈՆՈՒՆ:

94 *Bmf* 4. U. 14:

95 Բ չիք *p* (*d*, *q*):

1(00) V_{min}/T , U . 23:

3 *Surpuz* 9. 36:

67 Բ Համոխիւք:

73 Բ նշմարեալ:

76 Բ սգաստանամբ սգաստանամբ

79. β $\mu\lambda\eta\eta\eta$;

80 6 $h\pi\eta^d$:

82 f. *lum*:

© National Library of Armenia

գմարմին «բնակեաց ի մեզ»։ Այսինքն, չըջելով ընդ մեզ, զիս⁴⁰ րդ ի մարմին դառնայր բանն, որում չէր հնար եւ մարթ. զի մարմնոյ իւր բնութիւն է եւ զաւրութեան իւր կեանք։ Զի եթէ փոխեալ էր բանին ի մարմին, ապա խաչին ճառք դատարկ լինէին. քանզի անկեալ լինէր ի մարմին, որ ոչ ունէր անձամբ զկենդանութիւն։

12. Եւ թէպէտ եթուք մարմնով եւ արար կաւ եւ ծեփեաց զաչս կուրին, այլ զաւրութիւնն ի ձեռն մարմնոյն երաց զկուրութիւնն։ Եւ թէպէտ ի դրաւչակ հանդերձին Յիսուսի մերձեցաւ տեռատեան, այլ զաւրութիւնն էր, որ անշունչ հանդերձիւքն բղխէր զբժշկութիւնս անմարմինն իբրեւ զանմարմին. եւ մարմինն իբրեւ զմարմին։ Մարմնոյ լոկոյ չէ ինչ հնար ի վերայ ալեաց ջուրցն գնալ, այլ ընկղմել։ Իսկ զաւրութիւնն այնպէս թեթեւագոյն արար զիւր զմարմինն, զի եւ ի վերայ ջուրցն լուծականաց իբրեւ ի հաստատուն ատակի չըջէր։

13. Ոչ փոխեցաւ տէրն ի մարմին. եւ ոչ յառնուին զմարմինն եղեւ ինչ նմա խափան մարմինն. այլ ինքն լուսաւորեաց զմարմինն։ Ե՛լ մտաւ ի լեռանն ընդ Տեառն, եղեալ առաջի աչաց զտէրն մարմնով, զի ելեալ կայցէ ի լերինն. որ յամենայնի է ամենայն. եւ երեւի ուր եւ կամի բնաւ։ Անդ տեսանիցես զտէրն. անդ եկեալ հասանիցես Մովսէս եւ Նղիա, երկու վկայք ի հնոյն. անդ եկեալ գտանիցես Պետրոս եւ Յակովբոս եւ Յովհաննէս, երեք վկայք ի նորոյս. զի լուսաւորեցին յաճախեալ գանձք եկեղեցւոյ ի հնոյն եւ ի նորոյս։ Տէրն ի լերինն. անդ Մովսէս աւրինադիր. անդ Նղիա նախանձախնդիր, անդ լոյս, անդ արքայութեան ընծայութիւնք. անդ սիւնքն եկեղեցւոյ Պետրոս եւ Յակովբոս եւ Յովհաննէս։

14. Քանզի յառաջագոյն ասաց Տէրն ցաշակերտսն, եթէ «ահաւասիկ ելանեմք յերուսաղէմ» եւ կատարեսցի ամենայն ինչ, որ գրեալ է վասն իմ ի մարգարէս։ Զի մի զանգիտեսցեն ինչ ի ժամանակի չարչարանաց, յառաջագոյն հաստատեաց զմիտս նոցա ի լերինն. ցուցանելով զնշանակն արքայութեան։ Զի յորժամ տեսանիցեն թէ ո՛վ է նա եւ զինչ փառք նորա. որպէս նոցա մարթ էր տեսանել, քաջալերեսցին. եւ ի լսել զճառ չարչարանացն, եւ մի զանգիտեսցեն եւ երկնչիցին։ Զի թէ չէր տեսեալ զանճառ պատիւն եւ զփառս, վշտագին եւ երկմտութեան իրք համարեալ լինէին չարչարանքն։ Միածինն ի լերինն. անդ Մովսէսեանք, անդ եւ Պետրոսեանք։ Հայր ի բարձանց աղաղակէր, ոչ եթէ Մովսէս է որդի իմ, ոչ Նղիա, այլ դա է։ Ոչ ի դոցանէն ոք եւ ոչ ոք ի մարգարէնէ. եւ ոչ ի հրեշտակաց, որք շուրջ կան ի պաշտաման,

4 Բարուք Գ. 38:

10 Հմմտ. Յովհ. Թ. 6:

11 Հմմտ. Մատթ. Թ. 20:

27 Բ եղիայ:

31 Մարկ. Ժ. 33:

41 եղիայ:

այլ որ ընդ աջմէ նստի, «դա է որդի իմ սիրելի»։ Ոչ այնպէս զորոց ասէն եթէ «Որդիս ծնայ եւ բարձրացուցի եւ նոքա զիս անարգեցին»։

15. Անդ աւտար է անուանումն, քանզի ոչ վկայեն իրքն. աստ ճշմարիտ է անունն, քանզի իրքն արդեամբք դաւանեն. ոչ որդի ընդ որդիս եւ ոչ մարգարէ ընդ մարգարէս. եւ ոչ արդար ընդ արդարս, ոչ հրեշտակ ընդ հրեշտակս։ Այլ զի⁵⁰ նչ. ի վեր քան զամենայն որդի միածինն։ Եթէ կոչեսցին այլ որդիք միածինն զատականն անուամբ, յանդիմանեալ լինին. քանզի միածինն առանց եղբարց. եւ թէպէտ եւ կոչեսցէ իւր եղբարս, ոչ առ ի փոփոխումն բնուածոց ոչ հանէ զկոչեցեալսն ի բնութիւն միածինն եւ ոչ եղբարքն ասելով, զուրին անդոյգքն ընդ զուրին։ Յորժամ «միածին» անուն լսես, մի այլ ինչ առնուլ ընդ միածինն, զի մի անկեալ գտանիցիս ի Միածինէն։ Միածինն որ միայն ծնեալ է ի ծնողաց կոչի։ Եւ եթէ առ մեզ այսպէս, ո՞րչափ եւս առաւել անդ, ուստի եւ մեզ տուաւ ուսանել։ Եւ ոչ ի մտաց ինչ կոչեմք զմիածինն անուն, այլ լուեալ յաւետարանէ ընթեռնումք. «Միածինն որ է ի ծոցն Հաւր»։ ԶՀայր հարցուք որ ծնան, թէ ո՞վ ոք իցէ Յիսուս. թէ՛ յԱստուծո՞յ իմաստութենէն ի բերան որսորդին։

16. «Ի սկզբանէ էր Բանն». արդարեւ ճշմարիտ էր բանն որդի Աստուծոյ. զի Աստուծոյն ծնունդ յայտնէ եթէ Աստուծ ի սկզբանէր. ոչ եթէ կոչէր կամ ասէր, այլ է՛ր. ո՛չ յետ յաւիտենից եւ ժամանակաց, այլ ի բնէ «առ Աստուծոյ». ոչ ի լեզու կամ ի միտս Աստուծոյ, այլ Աստուծ առ Աստուծ։ Վասն որոյ ոչ միանգամ, այլ բազում անգամ ասի թէ «էր». իսկ վասն այլոցն ամենեցուն զնորին հետ ասէ. «Ամենայն ինչ նովաւ եղեւ». եւ ժամանակք եւ նորա եղեւ եւ ոչինչ». նաեւ ոչ ընդ նմա. զի որով «ամենայնն եղեւ», յայտ է թէ ընդ նմա եւ ոչ ինչ ի լինելոց. ոչ եթէ եղբարք մի է ի նորա եւ արարածք, քանզի Միածին է առանց եղբարց. մի է ի միովէն Աստուծոյ Աստուծ. եւ այլոցն արարածոց արարիչ։ Առնէ ոչ զոր ինչ Հայրն ոչ կամի, այլ զոր ինչ Հայրն կամի եւ նա զնոյն կամի։ Եւ ոչ եթէ բարբառով ուսանի ի Հաւրէ, այլ յառաջագոյն առանց լսելոյ գիտէ զկամս Հաւր։ Եւ ոչ այլ ինչ կամի Որդի, զոր Հայրն ոչ կամի, թէպէտ եւ ասէ. «Ոչ զոր ես կամիմ, այլ զոր դու»։

72 Բ չիք եւ։

73 Բ չիք ի (լինելոց)

75 Բ յայլոցն։

79 Մարկ. Ժ. 36:

43 Մատթ. Ժ. 5:

44 Եւ. Ա. 2:

53 Բ կա քնա:

61 Յովհ. Ա. 14:

70 Յովհ. Ա. 3:

րութիւնն կամեցաւ եւ արար: Կամի ի Հայր հանել, զի յայտ արացէ, եթէ մի կամք են իւր եւ ծնողին իւրոյ:

17. Որդի է ճշմարիտ եւ միաձին. եւ ոչ կասկած է, եթէ այլ ոք լինիցի նորա ժառանգակից. «զգործս, ասէ, զոր ես գործեմ, ոչ էս գործ եմ»: Տեսանե՞ս, զի ինքն գործէ եւ Հաւր ասէ են գործքն. եւ տայ զինքն փոխանակ մեր. եւ դնէ զանձն ի վերայ խաշանց իւրոց: Եւ ոչ կամի եթէ իւր միայն իցեն իրքն, այլ եւ Հաւր: Դա՛ է, ասէր, որդի իմ սիրելի, դմա լուիջիք: Եւ եթէ այս այսպէս իցէ, Հաւր լուիցուք եւ Որդւոյ, որում ետն հրաման լսել: Թողցուք զամենայն, զի թէպէտ են լեզուք մարդկան, այլ ոչինչ են հանգոյն սուրբ Հոգւոյն լեզուին: Լուիցուք Հաւր, որ գիտէն զՈրդի. լուիցուք Որդւոյ որ ճանաչէն զՀայր. լուիցուք սիրելւոյն զսիրելւոյն. լուիցուք արհնելոյն զարհնելոյն. լուիցուք անձնին զՄիածնէն. լուիցուք Աստուծոյ զԱստուծոյն. լուիցուք Հաւր եւ Որդւոյ վասն Որդւոյ:

18. Ձեմք իմաստնագոյն քան զԱստուած. ոչ որպէս մեր կամիմք, այլ որպէս Հայրն ծնաւ: Ոչ է մեր գիտել, թէ որպէս ոք իցէ Որդի, այլ ծնողին. ոչ է մեր պատմել զանճառ ծնունդն, թէպէտ եւ հակառակողն ոգորիցի: Ոչ այնպէս փոքր է Որդի, եթէ ընդ իմ եւ ընդ քո մտաւք անկանիցի, որում ոչ երկինք եւ ոչ երկնից երկինք, ոչ ծով եւ ոչ ցամաք բաւեն: Ոչ ծնաւ մեծն փոքր. եւ ոչ յորժամ փոքրկացուցանեմք զՈրդի, երեւիցի մեծ Հայր. այլ յորժամ երեւիցի Որդի մեծ, լուսաւորի մեծութիւն փառացն Հաւր: Ընդէ՞ր իցէ փոքր Որդի մեծին Աստուծոյ. մի եթէ նախանձո՞ւ ինչ մուտ եղեւ, վասն այնորիկ ոչ ծնաւ իւր նման: Այլ հեռի՛ է յաղբերէն բարութեանց նախանձ: Այլ կամեցա՞ւ արդեւք եւ ոչ կարաց. եւ եթէ նա ոչ կարէ, իսկ ո՞ւր գտանիցի զաւրութիւն: Այլ եղիցի մեծ Որդի. ոչ առ ի մերժումն եւ ի քակտումն Հաւր. մեծն ի մեծէն ծնեալ եւ ընդ նմին միաբանեալ. ի մի կամ Աստուած ի խորհուրդս, հանդերձ սուրբ Հոգւովն. միածին ի միոջէ անձնէ ծնեալ. ոչ չարչարանաւք կամ բաժանելով կամ պատառելով, այլ մնացեալ անձինն կատարեալ եւ բղխեալ ծնունդն կատարեալ:

19. Յորժամ յիշատակ ճառիցն Որդւոյ լինիցի եւ անուան, դո՞ղացեն արարածք ամենայն, որ նովաւ եղեն. եւ եթէ խաչին, ոչ երկինք հանդուրժեցին եւ ոչ երկիր համբեր, իսկ բնութեանն նորա զիմօրդ հանդարտել կարիցեն: Մի ինչ համեմատեցուք ընդ միածնին յիւրոցն արարածոց. քանզի ոչինչ ընդ նմա յորոց նովաւն եղեն: Յայտ է, թէ ոչ յառաջ ինչ քան զնա յոյժ մեծ թմն

84 Յովհ. Ժ. 25:

85 Հմմտ. Մարկ. Ժ. 45: Բ տա:

87 Հմմտ. Յովհ. Ժ. 15:

95 Բ վասն որդւոյ:

97 Բ ծնողին:

14 Բ յորդւոյ: անուն:

16 Բ հանդուրժեցին:

20 համարիմք ասել զՈրդի յառաջ քան զժամանակս, բայց ինձ փոքր մի թուի ասել քան զժամանակս: Սակայն ասել ասացուք յառաջ քան զժամանակս. այլ միտք վերացին անցցեն ի վեր քան զժամանակս եւ զյաւիտեանս եւ զանջրպետութիւնս. մի ինչ ընդ միածնին իմանալ, զի երեւեացի միածնին միածին. մի ինչ առ նմա զի իցէ առ ծնողին հանգերձ սուրբ Հոգւովն. Մի ինչ յառաջ քան զնա, զի իցէ ի սկզբանէ առ Հաւրն:

20. «Էր, ասէ, սկզբանէ» աւետարանին. ոչ եթէ ա՛րդ լինիցի, այլ էր իսկ. եւ ոչ առնու ի բաց զայն, թէ ի Հաւրէ: Քանզի անձինն ոչ յումեքէ, եւ միածնին ի միոջէն. ոչ հատանելով կամ բաժանելով, այլ իրեւ զՈրդի, յանչարչարական Հաւրէ. կացեալ մնալ անձնին որպէս էրն. եւ ծնեալ Որդի կատարեալ. եւ վկայ ծնողեանն ծնողն միայն է որ գիտէ: Եւ ամենայն բնութիւնքն երկիր եւեթ պագցեն լուրթեամբ: Մի խնդրել, որոց ոչ հասա- նես. եւ մի քննել, զոր ոչ գտանես. մի ածել զմտաւ թէ ո՞րպէս, այլ թէ ծնաւ զաւանդ: Ոչ քո է չափել զանչափն եւ պատմել զանչափն. ոչ քննել զանքնին, այլ քո այն է, զոր առանց վշտին պատումն. ոչ քննել զանքնին. եւ մի միածին. եւ չիք ոք որ ընդ անցանես, հաւատալ միածնին. եւ մի միածին կայ հակա- քեզ կուի զնիցէ: Զի որ ընդ միածնին կուի, ծնողին կայ հակա- ռակ. եւ որ անարդէ զՀայր, բարկացուցանէ զծնունդն. «Ես, ասէ, պատուեմ զՀայր» եւ «Հայր սիրէ զորդի»:

21. Անդ սէր, եւ աստ կուիք: Եւ ընդէ՞ր իցեն կուիք. այլ քանզի ոչ զգրոց զհետ երթամք, զմերոց մտաց ծնունդս ընդ ճառս գրոց խառնելով. զի «զյարդ ընդ ցորեան խառնէք», ասէ Աստուած ի ձեռն Երեմիայի. եւ Մովսէս ասէ. եթէ «Մի ինչ յաւելուր եւ մի պակասեցուցաներ»: Եւ եթէ ի Հինն ոչ ոք իշխէր յա- ւելուլ, որչափ եւս առաւել ի նորս մի զքո ինչ գրեւ, այլ յաւետա- րանէն ընթերցիր: Զի թէպէտ ուղիղ ինչ ասիցես, այլ քանզի քո է, պատճառք տայ կուոյ: Զի եթէ աշրունականացն չանսան, քոյոցն զիմօրդ հաւանեցին:

22. Որդի միածին է. Որդի ոչ եթէ մի ոք յամենայնէ, որով ամենայն ինչ եղեւ. ոչ ընդ ամենայնի, այլ յառաջ քան զամենայն: ոչ յառաջ քան զամենայն պատուեցաւ, այլ արար զամենայն: Ոչ զարգանալով ի մէջն եղեւ Աստուած, այլ էն Աստուած զգեցաւ զմեզ. եւ ի զգենութիւնն ոչ եթէ յաւելուած ինչ եղեւ զաւրութեանն, քանզի անկարաւտ է զաւրութիւնն:

23. Լոյս ե՛ւ առանց ամպոյ լոյս է. այլ քանզի անհնարին եւ անհանդուրժական էր ընդունել զճառագայթս անմատոյց լու-

40 Յովհ. Գ. 35:

43 Բ զարդ: Հմմտ. երեմ. Լ. 24:

44 Բ երեմիայի:

48 Բ տա: տ(է)րունականացն:

49 Բ քոյոցն:

22 Բ անցին:

32 Բ ծնողին:

36 Բ զանքնին:

38 Բ ծնողին կա:

39 Յովհ. Ը. 49:

որ ասէն, եթէ «Բանիւ Տեառն երկինք հաստատեցան եւ Հոգւով
բերանոյ նորա ամենայն զաւրութիւնք նոցա»: Ո՞ր իցէ որ ասէն,
թէ «չեւ եւս էր Հոգին: Ընթերցիր եւ բուժեաց ի վնասակար
քննութեանց:

29. Յորժամ ոք դմանեակ ոսկի կամիցի ըստ աւղակացն
թուել, ոչ յառաջնոյն ի վերջինն վազէ, այլ կարգաւ զբնաւ. զի մի
անցեալ ըստ վերջինն, զմիջինն ամենեւին թողուցու: «Յիսուս
աղաղակէր եւ ասէր. Եթէ ոք ծարաւի է, եկեսցէ առ իս եւ արբցէ»:
Միտ գիր ի սկզբան ճառիս. զի եւ այլն եւս գիւրաւ ինքնին գտա-
նիցի. «Որ հաւատայ յիս, ասէ, որպէս եւ ասեն գիրք». ապա
ուրեմն որ հաւատայ ի նա, այնպէս հաւատացէ, որպէս գիրքն
ասիցեն հաւատալ ի նա: Եւ թէ որպէս գիրքն ասեն հաւատայ ոք,
«գետք յորովայնէ նորա բղխեսցեն»: Բանն յերկոսեան կողմանս
ձգի. զի եւ ի նա հաւատալ ասեն գիրք, եւ գետք յորովայնից հա-
ւատացելոցն բղխել: Ոյք միտ գնեն, իմանան զինչ նշանակիցէ
բղխումն գետոցն յորովայնէ զճուրան կենդանութեան. այլ աւետա-
րանիչն խնայեալ ի մեզ ինքնին մեկնէ. «Չայս, առէ, ասաց վասն
Հոգւոյն զոր ընդունելոց էին, որք հաւատային ի նա. զի չեւ եւս
էր Հոգին» սուրբ. այսինքն առնուլ եւ տալ առաքելոցն զՀոգին,
«չեւ եւս էր»: Ոչ եթէ բնութիւն Հոգւոյն «չեւ եւս էր», որ ի բնէ
եւ յաւիտենից ելանէ անպակաս ի Հաւրէ:

30. Եւ ուստի՞ իմանայցեմք զայս. այլ յայնմանէ, զոր Տէրն
ասաց ցաշակերտսն թէ «Լաւ է ձեզ զի ես երթայց, զի եթէ ես ոչ
երթայց, Հոգին ոչ գայ». այլ սմին համեմատ եւ զՏեառնէն ասի.
«Քանզի Յիսուս չեւ եւս էր փառաւորեալ»: Եւ եթէ չեւ եւս էր
փառաւորեալ, զիա՞րդ ասէր, թէ «Տուր ինձ, Հայր, զփառսն զոր
ունէի առ քեզ յառաջ քան զլինելն աշխարհի»: Որ խծբիծս կար-
կատէ, բնութեան իրացն ինչ ոչ ստանանէ, եւ ինքն ի մեծ վնաս ան-
կանի: Զոր աւրինակ գրդի ոք երթիցէ քարի, քարին ինչ ոչ
ստանանէ, այլ զիւր զլուխն ողջ ոչ ապրեցուցանէ:

31. «Չեւ եւս էր, ասէ, Հոգին» սուրբ: Ընդէ՞ր. քանզի Յի-
սուս «չեւ եւս էր փառաւորեալ»: Զիա՞րդ արդեւք. զարգանալով
աճեաց եկն Յիսուս ի փառս: Ոչ այնպէս ծնաւ Հայր, զի աճելով
գայցէ ծնունդ ի փառս. ոչինչ առ յետոյ. եւ ոչ ստացաւ ինչ զոր
ոչ ունէր: Քանզի յորժամ ասէն, եթէ «Հնազանդ եղեւ մահու չափ
եւ մահու խաչին. վասն այսորիկ եւ Աստուած զնա բարձրացոյց»:
Ոչ վարձս Հնազանդութեանն է իմանալ զփառսն. քաւ եւ մի լիցի
այսպէս կարծել զմիածնէն. զի այսպիսի հայհոյութիւն ի ծնողն

45 Յովհ. է. 37. իմացիր սկզբան:
47 Բ հաւատաւ: Յովհ. է. 38:
49 Բ հաւատացէ:
54 Բ խնայել:
54/55 Յովհ. է. 39:
55 Բ հաւատացին: չիք գի:

60 Յովհ. Ժ. 2. 7:
61 Բ դա: Բ ի տեառնէն:
62 Յովհ. է. 39:
64 Յովհ. Ժ. 5:
73 Փիլիպ. Բ. 8:
74 Բ ծնաւդն:

երթայ. այլ որպէս ծնաւ նոյնպէս է եւ ոչինչ յետոյ ստացաւ կամ
ստանայ: Գրեալ է եթէ «Աճէր եւ զարգանայր». հասակաւ աճէր
եւ զարգանայր ըստ մարմնոյն, որ կարաւ էր հասակին, եւ ոչ
ըստ աստուածութեանն, որ յառաջ էր քան զհասակ եւ քան զժա-
մանակս եւ քան զյաւիտեանս:

32. Զիա՞րդ արդեւք «չեւ եւս էր փառաւորեալ Յիսուս»: Եւ
դարձեալ ասէ. «Հայր, եկն ժամանակ զի փառաւորեացես զՈրդի
քո»: Փառաւորեացէ՞ զփառաւորեալն: «Տուր, ինձ, ասէ, Հայր»:
Չոր ոչ ունիցի՞ խնդրիցէ. այլ «զոր ունէին ի քէն», եւ առ քեզ
թողի, «յայտնեալ». քանզի մարդ կարծիմ. ոչ տեսիլ, ոչ գեղեցկու-
թիւն եւ ոչ փառք ինչ երեւէին. զոր ծածկեցի թաքուցի հանդերձ
քեւ. կամիմ զի եւ քեւ ծագեալ յայտնեացի: Եւ քանզի յորժամ
ասէ, եթէ «Տէր թաղաւորեաց», ոչ յայնժամ լինիցի սկիզբն թա-
ղաւորութեանն, այլ սկիզբն այնոցիկ, որոց թաղաւորէն եւ թա-
ղաւորեցուցանէ:

33. «Չեւ եւս էր, ասէ, Յիսուս փառաւորեալ». այսինքն չեւ
եւս էր ծանուցեալ. ոչ եթէ յետոյ առնուցու, այլ ծագէ զղաւղեալն
յայտնելովն: «Եկն, ասէ, ժամանակ. փառաւոր արա զորդի քո».
եւ թէպէտ ժամանակ խաչին, մանաւանդ ժամանակ անարգանաց
կարծի, եւ ոչ փառաց. այլ քանզի գիտէր, թէ խաչին յայտնելոց է
ծածկեալն, վասն այնորիկ զժամանակ խաչին ժամանակ փառաց
կոչէր: Եւ եթէ փառաւորէր խաչելութեամբն, ընդէ՞ր հրաժարէր
ի խաչէն: Իսկ վասն մարմնո՞յն արդեւք. եւ ահաւանիկ զրէր զի
յարուցանելոց էր զմարմինն:

34. Իսկ վասն հոգւոյն, զոր ի Հաւրն ձեռս էր յանձն առնե-
լոց, մեզ պատուէր տայր չերկնչել, եւ ինքն երկնչիցի՞: Եւ ընդէ՞ր
ոչ երկնչուք. «Քաջալերեցարուք, ասէ, մի երկնչիք. քանզի ես
յաղթեցի աշխարհի»: Եւ եթէ մեք նորա յաղթութեամբն քաջա-
լերել պարտիմք. նա որ յաղթեացն՝ երկնչի՞: Եւ մեք ընդէ՞ր
սպանանել զորդիս: Այլ անմահ են. «Ոչ ոք, ասէ, կարէ
երկնչիցիմք վասն ոգւոց. այլ անմահ են. «Ոչ ոք, ասէ, կարէ

35. Այլ վասն մարմնոյ «եւ հեր մի, ասէ, ի գլխոյ ձերմէ մի
կորիցէ»: Այլ վասն ընչից՝ «եթէ ոք, ասէ, թողուցու վասն իմ եւ
վասն արքայութեան երկնից, զհայր կամ զմայր, զեղբարս կամ
զինչս, ընկալցի հարիւրապատիկ յայսմ աշխարհի եւ զկեանս
յաւիտենից»: Եւ առաքեալ ասէ, եթէ «Չեն արժանի չարչարանք
ժամանակացս առ հանդերձեալ փառսն որ յայտնելոց են ի մեզ»:

76 Բ յետոյ:
77 Ղուկ. Բ. 40:
81/82 Յովհ. Ժ. 1:
83 Յովհ. Ժ. 5:
88 Մաղթ. Ղ. 1:
400 Հմմտ. Ղուկ. Իգ. 46:

1 Բ երկնչիցի:
2 Յովհ. Ժ. 2. 33:
4 երկնչի:
6 Մատթ. Ժ. 28:
7 Ղուկ. ԻԱ. 18:
10 Մարկ. Ժ. 29:

